

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱՉԻԿ ԱՎԱԳՅԱՆ, երկր. հանք. գիտ. դոկտոր

ՀՀ ԳԱԱ Մ. Զոքանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի

գլխավոր գիտաշխատող

ԹԵՂՈՒՏԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ՍՊԱՍՎՈՂ ՀԱՆՔԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Թումանյանի շրջանում՝ Թեղուտ գյուղից 3,5 կմ դեպի հարավ-արևելք:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարները՝ հաստատված ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից, կազմում են.

- հանքաքարինը ($B+C_1+C_2$ կատեգորիաներինը)՝ 459,24 մլն տ,
- պղնձինը՝ 1630,2 հազ. տ,
- մոլիբդենինը՝ 99116,8 տ,
- ծծմբինը՝ 17021,5 հազ. տ,
- ոսկունը՝ 4776,2 կգ,
- արծաթինը՝ 303,8 տ:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման թույլտվություն (լիցենզիա) ստացած «Արմենիան քափըր փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմված «Աշխատանքային նախագծում» մեզ համար անհասկանալի պատճառով ռենիումի C_2 կատեգորիայի պաշարները գնահատված են 44,8 կգ (պարունակությունը 5,6 գ/տ): Գ.Փիջյանի տվյալների հիման վրա մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ $B+C_1+C_2$ կատեգորիաների մոլիբդենի պաշարների մեջ ռենիում հարակից տարրի պաշարները կարող են կազմել 120,71 տ (հիմնավորումը՝ ստորև):

Թեղուտի հանքավայրում մոլիբդենի պաշարները կազմում են 99,117 հազ. տ և, քանի որ մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութում մոլիբդեն մետաղի պարունակությունը կազմում է 59,94%, ապա մոլիբդենիտ հանքանյութի քանակը Թեղուտի հանքավայրի հանքաքարերում կարող է կազմել 165360 տ, իսկ ռենիումի քանակը մոլիբդենիտ հանքանյութի մեջ՝ 120,71 տ (Գ.Փիջյանի տվյալների հիման վրա կատարված հաշվարկով մոլիբդենիտ մաքուր հանքանյութի մեջ ռենիումի պարունակությունը կազմում է 0,073%)*:

Գ.Փիջյանի տվյալների հիման վրա նույնանման հաշվարկներ կատարենք հիմնական հանքանյութերի հետ հարակից տարածված սելենի և տելուրի համար: Խալկոպիրիտ հանքանյութի մեջ սելենի քանակը կազմում է՝ $4708261 \times 0,0346:100 = 1629,0$ տ, տելուրի վերաբերյալ պարուն Գ.Փիջյանի աշխատանքներում տվյալներ չկան (հավանաբար անալիզներ չեն կատարվել): Մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութի մեջ սելենի և տելուրի քանակները հավասար են միմյանց և կազմում են 8,30 -ական տոննա:

Այսպիսով, Գ.Փիջյանի անալիզների հիման վրա կատարված հաշվարկներով Թեղուտի հանքավայրի հիմնական պղինձ և մոլիբդեն մետաղների հետ հարակից տարածված ռենիումի, սելենի և տելուրի ընդհանուր քանակները կազմում են. ռենիումինը՝ 120,71 տ, սելենինը՝ 1637,3 տ, տելուրինը՝ 8,3 տ:

Հայաստանի պղնձամոլիբդենային կազմավորման հանքավայրերի հանքաքարերում հիմնա-

* Пиджян Г.О. Медно-молибденовая формация руд Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1975. 310с.

կան մետաղների հետ հարակից տարածված ոսկուց, արծաթից, ռենիումից, սելենից և տելուրից բացի հայտնաբերված են նաև շատ այլ տարրեր, ինչպես օրինակ, բիսմուտը, գերմանիումը (Ագարակի, Դաստակերտի, Այգեձորի, Հանքավանի, Քաջարանի հանքավայրերում), սկանդիումը, երկաթը, վանադիումը, տիտանը, պլատինոիդների խմբի պլատինը և պալադիումը (Քաջարանի հանքավայրում): Այնպես որ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի լիարժեք ու մանրակրկիտ հետազոտության պարագայում նշված հարակից տարրերից շատերի հայտնաբերումը բացառված չէ:

Պարզորոշ երևում է, որ Թեղուտի հանքավայրը երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հետազոտված է ոչ լիարժեք՝ թերի և ոչ բազմակողմանի:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման իրավունքը տրվել է «Արմենիան քափըր փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությանը, որն էլ 2001թ.՝ ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված պաշարների հավաստիության մեջ համոզվելու նպատակով, Հայաստան է հրավիրել կանադական «Strathkona Mineral Services Ltd» ընկերության մասնագետներին: Վերջիններս իրենց հաշվետվության մեջ նշել են. «Հանքաքարերի պաշարները նախկինում հաստատված պաշարներից ավելի կարող են լինել 15%-ով, իսկ պղնձի և մոլիբդենի պարունակությունները ավելի կարող են լինել համապատասխանաբար 19 և 26 տոկոսներով»: Միևնույն ժամանակ «Արմենիան քափըր փրոգրամ» ընկերությունն էլ իր հերթին՝ իր 2006թ. կազմած «Աշխատանքային նախագծում» գրում է, որ. «Հանքավայրի տարածքում կատարվել են լրահետախուզական աշխատանքներ՝ հանքաքարերի պաշարներն ու մետաղների պարունակությունները ճշտելու նպատակով»: Դե, եթե այդ բոլորը ճիշտ է, ապա ինչու՞ ընկերությունը հանքավայրը չի հետազոտել բազմակողմանի, չի որոշել հիմնական մետաղների հետ հարակից տարածված բոլոր տարրերի պարունակությունները (որոնցից մի քանիսը շատ ավելի քանկ են քան ամենաքանկ մոլիբդենը), և ինչու՞ ճշտված պաշարները վերահաստատման չեն ներկայացվել Հայաստանի Պաշարների պետական գործակալությանը:

Մեր կարծիքով, դա չի արվել միտումնավոր, որպեսզի տեսանելի չդառնա թե որքան արժեքավոր տարրեր են թափվելու պոչամբարներ, կամ օտարներին նվիրվելու խտանյութերի վաճառքի ժամանակ (մոլիբդենի խտանյութերի վաճառքի ժամանակ չի գնահատվում և չի փոխհատուցվում մոլիբդենի հետ սերտորեն կապված, շատ արժեքավոր՝ մոլիբդենից 125 անգամ քանկ, ռենիումը, իսկ պղնձի խտանյութերի վաճառքի պարագայում ոսկին, արծաթը, սելենը, տելուրը, բիսմուտը և այլն), և որքան թունավոր տարրեր են թափվելու պոչամբարներ (սելենը, տելուրը, մկնդեղը խիստ թունավոր տարրեր են նույնիսկ իրենց միացությունների տեսքով) ու թունավորելու միջավայրը:

Նշենք, որ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման պարագայում, Ջանգեզուրի և Ագարակի կոմբինատների օրինակով, վաճառքի պետք է հանվեն պղնձի և մոլիբդենի խտանյութերը, սակայն, եթե Ջանգեզուրի կոմբինատի կողմից թողարկվող պղնձի խտանյութի վաճառքի պարագայում պղնձից բացի գնահատվում է նաև խտանյութ անցած ոսկու մի մասը (ո՞ր մասը, մեզ հայտնի չէ՝ դա կոմբեյթոն գաղտնիք է), ապա այս (Թեղուտի) պարագայում ոսկու և ոչ մի մասնիկ էլ չի գնահատվելու, քանի որ պղնձի խտանյութ անցած ոսկու պարունակությունը ցածր է լինելու 3,5 գ/տ-ից (գնորդի պայմաններից մեկն էլ այն է, որ ոսկու պարունակությունը խտանյութում պակաս չպետք է լինի 3,5 գ/տ-ից):

Ընկերությունն այդ թունավոր տարրերի մասին խոսել չէր կարող, քանի որ «Նախագծում» (էջ 39) պոչանքները դասում է «վտանգավորության 4-րդ դասին»՝ «ոչ հրդեհավտանգ»: Թե ինչու՞ պոչանքների հրդեհավտանգավորության մասին է խոսվում, այլ ոչ թե թունավորության, պարզից էլ պարզ է: Չէ որ ընկերությունը խիստ շահագրգռված է այդ հանքավայրի շահագործման գործում. պղնձի, մոլիբդենի, ոսկու և այլ մետաղների գները 2004թ. համեմատ բազմիցս աճել են և շարունակում են աճել (ոսկու գինը այժմ գերազանցում է 2004թ. պլատինի գինն) և կարող են խոշոր շահույթներ բերել: Շահագործման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ էր հասարակությանը և ՀՀ կառավարությանը ցույց տալ, որ այդ հանքավայրի շահագործումը շրջակա միջավայրի համար էական վնասակար ազդեցություն չի ունենա: Հենց դրա համար էլ 2005թ. ընկերության կողմից կազմվել է «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» կեղծիքներով ու խաբեությամբ հարուստ «հիմնավորումը» և ներկայացվել է քննապահպանության նախարարության «դատին»:

Մինչ կարևորագույն հարցերից մեկին՝ Թեղուտի հանքավայրը շահագործել, թե՞ ոչ, պատասխանելը, հաշվարկները դրա ընդերքի հարստությունների արժեքը՝ 2007թ. նախաճգնա-
ժամային տարվա գներով:

Աղյուսակ

**Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ հաստատված պաշարների և
վերջիններս հետ հարակից տարածված տարրերի արժեքի հաշվարկը**

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, ԱՄՆ դոլար	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, ԱՄՆ դոլար
Պղինձ	տ	1630200	7465	12.169.443.000
Մոլիբդեն	տ	99117	62200	6.165.077.400
Ոսկի	կգ	4776	31500	150.444.000
Արծաթ	տ	303,8	450000	136.710.000
Ռենիում	տ	120,71	7777700	938.846.167
Սելեն	տ	2210,15	52220	115.414.033
Տելուր	տ	409,3	116000	47.478.800
Ծծումբ	տ	17021500	650	11.063.975.000
Երկաթ	տ	14.000.000	300	36.987.388.400
Ընդամենը				4.200.000.000

Տեղեկացնենք, որ կորզված, մաքրված, գտված ու գերզտված տարրերի գինը միջազգային շուկայում գնահատվում է 15-ից մինչև մի քանի հարյուր (նույնիսկ հազար) անգամ թանկ, քան դրանց սովորական տեսակներինը: Համոզիչ լինելու համար բերենք օրինակներ. սովորական կապար մետաղի մեկ տոննան այժմ արժե 2270 ԱՄՆ դոլար, 99,999%-ով գերզտված կապարինը (1999թ. գներով, երբ սովորական կապարի մեկ տոննան արժե 480 ԱՄՆ դոլար)՝ 320 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 99,9999%-ով գերզտվածինը՝ 870 հազ. ԱՄՆ դոլար (իր սովորական տեսակից թանկ է 383 անգամ): Սովորական ռենիումի մեկ տոննան 2007թ. գներով արժե 7777700 ԱՄՆ դոլար (մեկ գրամը՝ 7,78 ԱՄՆ դոլար), իսկ 99,9999%-ով գերզտվածինը (1999թ. գներով, երբ մեկ տոննա ռենիումը արժե 1,5 մլն ԱՄՆ դոլար)՝ 900 մլն ԱՄՆ դոլար (մեկ գրամը՝ 900 դոլար), իր սովորական տեսակից թանկ էր ավելի քան 115 անգամ:

Մեր հարգարժան կառավարությանն ու հանքարդյունահանող ձեռնարկություններին ու գործարարներին տեղեկացնենք մի շատ կարևոր իրողության մասին, որ մեր օրերում և մեր հանրապետությունում մոռացության է տրվել ու չի կիրառվում: ԽՍՀՄ-ի օրոք գործում էր մի պարտադիր հրահանգ՝ շահագործվող հանքավայրերի տարածքում (խոր հորիզոններում ու թևերում) P_1 կատեգորիայի ռեսուրսների սահմանազծում (հետագայում մաս դրանցից դուրս) յուրաքանչյուր տարի հետախուզել և հաստատման ներկայացնել հանքաքարերի այնքան պաշարներ, որքան արդյունահանվում է տվյալ հանքավայրի ընդերքից: Եվ դա կատարվում էր այնքան ժամանակ, մինչև իրավամբ սպառվում էր տվյալ հանքավայրի ընդերքի ռեսուրսը: Դրանով իսկ կրկնակի, երբեմն էլ շատ ավելի երկարացվում էր լեռնահանքային ձեռնարկության «կյանքի տևողությունը»: Այժմ այդ կարգը ՀՀ-ում չի գործում և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո խսպառ մոռացության է տրվել:

Այժմ հիմնավորենք, որ պիրիտ հանքանյութի քանակը Թեղուտի հանքավայրում (ինչպես մաս մյուս բոլոր հանքավայրերի հանքաքարերում) բազմակի անգամ մեծ է պղնձի խալկոպիրիտ հանքանյութի քանակից: Թեղուտի հանքավայրի հետախուզման ընթացքում ծծմբի գծով անալիզի են տրվել հանքաքարերը (հանքանյութի մեջ ծծմբի պարունակությունը հանրահայտ է) և ստացվել է, որ Թեղուտի հանքաքարերում ծծմբի պարունակությունը կազմում է 3,7% և դրա հիման վրա էլ ծծմբի պաշարների քանակը (հանքաքարերի արդյունաբերական պաշարներում) կազմել է 17 մլն 21,5 հազ. տ: Մեզ հայտնի են մոլիբդեն և պղինձ մետաղների պաշարները, որոնք համապատասխանաբար կազմում են 99117 տ և 1630200 տ: Հաստատված պաշարների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Թեղուտի հանքաքարերում առկա մոլիբդենի մոլիբդենիտ և պղնձի խալկոպիրիտ

սուլֆիդային հանքանյութերի քանակները կազմում են 165360 տ և 4708260 տ, որոնց մեջ էլ ծծմբի քանակը համապատասխանաբար կազմում է 67136 տ և 1645066 տ, իսկ երկու հիմնական հանքանյութերում համատեղ՝ 1712202 տ: Մեզ մնում է հաշվարկել, թե որքան ծծումբ է բաժին հասնում Թեղուտի հանքավայրի հանքաքարերում առկա երրորդ՝ սուլֆիդային պիրիտ հանքանյութին: Ծծմբի հաստատված 17021500 տ պաշարներից հեռացնելով մոլիբդենիտ և խալկոպիրիտ հանքանյութերի ծծմբի բաժինը, կստանանք պիրիտ հանքանյութի բաժինը՝ $17021500 - 1702202 = 15309298$ տ: Հայտնի է, որ պիրիտ հանքանյութում ծծմբի պարունակությունը կազմում է 53,45%, հետևապես Թեղուտի հանքաքարերում առկա պիրիտ հանքանյութի քանակը իրականում կազմում է 28 մլն 642,3 հազ. տ: Հետևապես սելեն և տելուր տարրերի քանակները պիրիտ հանքանյութի մեջ կկազմեն. սելենինը՝ 572,85 տ, տելուրինը՝ 401,0 տ:

Այսպիսով, սելեն և տելուր թունավոր տարրերի քանակները Թեղուտի հանքաքարերում՝ հաշվարկված մեր կողմից Գ.Փիջյանի տվյալների հիման վրա, կազմում են՝ սելենինը՝ 2210,15տ, տելուրինը՝ 409,3տ:

Ինչու՞ կատարվեց սույն հաշվարկը: Մենք արդեն իսկ գրել ենք, որ «Արմենիան քափըր փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը պատրաստվում է շահագործել Թեղուտի հանքավայրը, չի պատրաստվում շուկա մտնել վերջնարտադրանքներով և թողարկելու է միայն պղնձի ու մոլիբդենի անջատ խտանյութեր, որոնք վաճառվելու են արտասահմանյան երկրներին՝ առանց գնահատվելու հիմնական մետաղների հետ հարակից տարածված տարրերը, հետևապես և առանց փոխհատուցվելու դրանց արժեքները: Այս պարագայում պիրիտ հանքանյութի խտանյութ չի թողարկվելու, քանի որ մետալուրգիական գործարան չի կառուցվելու և դրա մեջ գտնվող օգտակար տարրերը՝ ծծումբը, երկաթը, սելենը, տելուրը և սպասվող շատ այլ տարրեր չեն կորզվելու: Հետևապես պիրիտը որպես «անպետք թափոն» թափվելու է պոչամբարներ իր սելենի ու տելուրի հսկա պարունակություններով հանդերձ և թունավորելու է միջավայրը:

Տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում պոչամբարներ թափվող պիրիտի քանակը կարող է կազմել 232 հազ. տ. ծծմբինը՝ 124 հազ. տ, երկաթինը՝ 108 հազ. տ, սելենինը՝ 4,64 տ, տելուրինը՝ 3,25 տ: Հարց է առաջանում. պոչամբարներ թափվող օգտակար (կորզելու պարագայում) և թունավոր (միջավայր թափվելու պարագայում) տարրերի այս քանակները շա՞տ են, թե՞ քիչ: Պատասխանենք. շատ-շատ են՝ թե՛ իրենց արժեքային առումով, և թե՛ վտանգավորության (թունավոր լինելու) առումով:

2008թ. մայիսի վերջին օրերին ստացված տեղեկությունների համաձայն ծծմբի գինը միջազգային շուկայում մեծ թռիչք է ապրել՝ 21-րդ դարի առաջին տարիներին ունեցած 30 ԱՄՆ դոլարից 2008թ. մայիսի 29-30-ի դրությամբ աճել է մինչև 600-700 ԱՄՆ դոլարի՝ Միջինասիական հանրապետություններում և 680-700 ԱՄՆ դոլարի՝ ԱՄՆ-ում: Եթե ընդունենք, որ համաշխարհային շուկայում ծծմբի մեկ տոննայի միջին գինն այժմ կազմում է 650 ԱՄՆ դոլար. ապա պարզ կդառնա թե որքան անտնտեսվար աշխատանք ենք կատարում մենք և կկատարենք այսուհետև, եթե աշխատենք նույն ոճով:

Տարրական հաշվարկները ցույց են տալիս, որ Թեղուտի հանքավայրի շահագործման պարագայում միայն ծծումբ տարրի չկորզման հետևանքով յուրաքանչյուր տարի (տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում) կփոշիացվի 80,6 մլն ԱՄՆ դոլարի հարստություն, իսկ հանքավայրի ամբողջ պաշարների շահագործման պարագայում՝ 5287,4 մլն ԱՄՆ դոլարի:

«Արմենիան քափըր փրոգրամ» ընկերությունը «հանրության դատին» է ներկայացրել հսկա կեղծիքներ պարունակող երկու փաստաթուղթ՝ «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» և «Աշխատանքային նախագիծ», որոնցում ամենուրեք շահարկվում է, որ Թեղուտի հանքավայրի ընդերքից արդյունահանվելու և մշակվելու է 7 մլն տ հանքաքար (թաքցվում ու քողարկվում է, որ առաջին 8 տարիներից հետո ձեռնարկության արտադրական հզորությունը մեծացվելու է կրկնակի, իսկ դրանից 4 տարի անց՝ եռակի, այսինքն հանքավայրի շահագործման 13-րդ տարուց հետո դրա ընդերքից տարեկան արդյունահանվելու և մշակվելու է 21 մլն տ հանքաքար): Այստեղից պարզ է դառնում, որ հարստապոչերի հետ պոչամբարներ (միջավայր) թափվող թունավոր տարրերի քանակներն էլ եռապատկվելու են:

Ինչևհետեւ, Թեղուտի հանքավայրի ընդերքից տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում ձեռնարկությունը հետախուզված պաշարներով (459,24 մլն տ) ապահովված կարող է լինել ավելի քան 65 տարի, իսկ պաշարներով ու կանխատեսումային ռեսուրսներով համատեղ՝ ավելի քան 109 տարի: Սակայն նշված ձեռնարկության տերերը, մտածելով, որ մեկ սերունդ (այժմյան տերերը) ի վիճակի չէ այդքան երկար ապրելու, որպեսզի հիմնովին «չորացնի» Թեղուտի ընդերքը, որոշել է դա կատարել 25-28 տարվա ընթացքում:

Տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու, մշակելու և մետալուրգիական փուլով վերամշակելու պարագայում՝ կիրառելով տարրերի կորզման առաջավոր երկրների ժամանակակից տեխնոլոգիաները (տարրերի վերջնական կորզումները հասցնելով 90%-ի) լեռնամետալուրգիական ձեռնարկության հասույթը կարող է կազմել 293 մլն ԱՄՆ դոլար, որից շահույթը՝ 117,0 մլն ԱՄՆ դոլար: Սա, իհարկե, շատ մեծ թիվ է, սակայն ո՛չ ՀՀ կառավարությունը, ո՛չ հանքավայրը շահագործման «ընդունած» ձեռներեց մարդիկ (հատկապես հայրենիքի սիրով համակված՝ ձեռներեց հայերը) և ո՛չ էլ Հայաստանում ապրող ժողովուրդը, իրավունք չունեն հրապուրվելու մեծամեծ շահույթներով՝ շահագործելու Հայաստանի գողտրիկ վայրերից մեկում՝ Լոռվա գեղատեսիլ դրախտավայրում, չքնաղ անտառներով ծածկված լեռնալանջերում ծվարած Թեղուտի հանքավայրը: Բերենք փաստարկներ այդ հանքավայրի շահագործումից սպասվող վտանգների ու վնասների մասին, որոնք կշեռքի նժարին դնելու պարագայում շատ ավելի ծանրակշիռ կլինեն, քան միլիոն-միլիարդավոր դոլարների շահույթը, առավել ևս այն շահույթը, որը չի մնալու մեր ժողովրդին և իր գերակշիռ մեծամասնությամբ (մոտ 80%-ով) մտնելու է օտարների գրպանն ու դուրս է տարվելու Հայաստանից:

1. Թեղուտի հանքավայրը շահագործվելու է «Արմենիան քափրը փրոգրամ» ընկերության կողմից: Այս ընկերությանն է հատկացվել 1970 հեկտար հողատարածք, որից 1589,6 հեկտարը անտառային ֆոնդի հողերն են (Հ.Սանասարյան, 2007, էջ 20)¹: Հանքավայրի շահագործման համաձայն՝ բաց հանքի տարածքը զբաղեցնելու է 240 հեկտար, պոչամբարների տարածքը՝ 214 հեկտար, մակաբացման ապարների լցակայաններին՝ 107,4 հեկտար, սակայն պարոն Հ.Սանասարյանի գրքում չենք հայտնաբերել, թե որքան տարածք են զբաղեցնում մյուս բոլոր օժանդակ կառույցները՝ ճանապարհները, զանազան պահեստները, մեխանիզմների նորոգման հրապարակները, շենքերն ու շինությունները և այլն: Կարծում ենք՝ վերջիններիս զբաղեցրած տարածքը 200 հեկտարից պակաս լինել չի կարող:

Ինչևհետեւ, ընկերությանը հատկացված հողատարածքն ամբողջությամբ դրվելու է Թեղուտի հանքավայրի շահագործման և շահագործման հետ կապված օժանդակ կառույցների տակ (հակառակ դեպքում ինչու՞ է հատկացվել), անտառահատման ու ոչնչացման է ենթարկվելու ոչ միայն 1589,6 հա «անտառային ֆոնդը», այլ դրանից շատ ավելին:

Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ եթե զառիթափ լեռնալանջերում անտառապատ բաց հանքի տարածքը զբաղեցնում է 240 հեկտար, ապա ոչնչացման ենթակա անտառները ոչ թե կարող են զբաղեցնել հենց այդքան (240 հա) տարածք, այլ դրանից մոտ 3 անգամ ավելի: Բանն այն է, որ բաց հանքից լեռնալանջերով վերև ընկած անտառները ևս ենթակա են ոչնչացման՝ այդ տարածքի ծառերը սնուցող ջրերը, կորցնելով ներքևի ապարների դիմադրությունը, ազատ և սրընթաց հոսելու են դեպի բաց հանքի դատարկ տարածքը, որի հետևանքով էլ բաց հանքից վերև ընկած տարածքի (մակերեսով մոտ 2 անգամ ավելի, քան բաց հանքի տարածքն է) ամբողջ ծառերը չորանալու և ոչնչանալու են: Հետևապես ոչնչացման ենթակա անտառների մակերեսը կազմելու է ոչ թե 1589,6 հա, այլ մոտ 2070 հա:

2. Նախագծում անտառին հասցվող վնասի չափը հաշվարկելիս զարմանալիորեն հաշվի է առնվել փայտանյութը. այստեղ գրված է. «Հատման կենթարկվի մոտավորապես 127000 ծառ՝ 60400 խոր. մ փայտանյութի մասսայով»:

Անհավատալի ու անհասկանալի է, թե ինչպես կարող է նշված տարածքի հսկա ծառերից յուրաքանչյուրը, միջին հաշվով, «տալ» ընդամենը 0,47 խոր.մ փայտանյութ: Կարծում ենք, այս «անշառ ու անվտանգ» գործում ևս խաբեության հոտ է փչում:

Այսուհետև, ի՞նչ փայտանյութի մասին է խոսքը և ինչու՞ է, անտառը դիտվում որպես միայն

¹ Սանասարյան Զ.Ա., Թեղուտ, Երևան, 2007:

փայտանյութ տվող «աղբյուր»:

Անտառը թթվածին ու ֆիտոնցիդներ, հատապտուղներ ու մրգեր տվող, ջուր, բազմատեսակ կենդանիներ ու դեղաբույսեր պահող ու պահպանող միջավայր է:

Գ.Ա.Բեկլերը (1988)¹ գրում է. «Մեկ հեկտար անտառը տարեկան մաքրում է 20 մլն խոր. մ մթնոլորտ, խոնավացնում է օդը տասն անգամ ավելի, քան դա անում է մեկ հեկտար մակերեսով ջուրը: Անտառը արտադրում է «մթնոլորտի վիտամիններ»՝ ֆիտոնցիդներ կոչվող նյութը, որի մի քանի տասնյակ կիլոգրամը բավարար է միջին չափերի (մոտ 600 հազար բնակչություն ունեցող) քաղաքի բոլոր մանրէները ոչնչացնելու համար: Հատկապես առատ՝ օրական մինչև 30 կգ. ֆիտոնցիդներ է արտադրում գլիի (ՎՏՁՁպՉպսՖվՈՍ) մեկ հեկտար անտառը» (էջ 252):

«Այժմ հանրահայտ է անտառի ազդեցությունը մթնոլորտի ջերմային հաշվեկշռի վրա, ջրերի պահպանության, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանության գործում, որոնց կրճատումը փոխում է էվոլյուցիայի ուղին: Արևադարձային անտառները հարուստ ծագումնաբանական (գենետիկական) միջավայր են, որոնցում կենտրոնացված է երկրի բուսական ու կենդանական տեսակների կեսից ավելին:

Բժիշկները գտնում են, որ արևադարձային անտառների ոչնչացումը կարող է լրջորեն խանգարել հիվանդությունների դեմ ուղղված մեր պայքարին, հատկապես օնկոլոգիական» (Բեկլեր, էջ 64):

«Մեր մոլորակի մերկացման հետ կապված՝ սկսվել է պայքարը անտառների պահպանության համար: 1701թ. Ռուսաստանի թագավոր Պետրոս I-ի կողմից հրահանգներ են արձակվել՝ ուղղված անտառների պահպանությանը, որոնցում մասնավորապես արգելվել է անտառահատումը գետահովիտներում: Այնուհետև նշվել են արգելված առանձին տեսակի ծառերը: 16-րդ դարում անտառների պահպանությունն ամրագրվել է Ֆրանսիայում, իսկ հաջորդ հարյուրամյակում այստեղ հրապարակվել է այն ժամանակների համար օրինակելի բնապահպանական փաստաթուղթը՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 16-րդի օրոգմանը ջրերի և անտառների վերաբերյալ: Իսկ բնապահպանական առաջին գրավոր փաստաթուղթը համարվում է Բաբելոնի արքա Համմուրաբիի օրենսգիրքը (1792թ. մ.թ.ա.), որն ընդգրկում է անտառների պահպանության մասին հոդված, որի խախտողը դատապարտվում էր մահապատժի: Դրանից քիչ ավելի ուշ (1122թ. մ.թ.ա.) անտառների պահպանությանն ուղղված դեկրետ է ընդունվել նաև Չինաստանում» (Բեկլեր, էջ 24, 25):

Դե՛, մեծարգո՝ տիկնայք և պարոնայք, եկեք տեսնենք, թե ինչպես են պահպանվել անտառները դեռևս մեր թվարկությունից շատ առաջ, և ինչպես ենք պահպանում մենք այժմ՝ 21-րդ դարում: Հավանաբար շատերը Բաբելոնի բնակչությանը համարել և համարում են բարբարոսներ. այդ դեպքում եկեք գնահատենք մեր գործողությունները, մեզ՝ որպես ժողովուրդ, և տեսնենք, թե ավելի քան 3000 տարի Բաբելոնից հետո ովքեր ենք մենք, երբ մեր երկիրը՝ մենք, ինքներս, մեր իսկ ձեռքով, անապատ ենք դարձնում:

Հ.Սանասարյանը գրում է. «Թեղուտի խախտվող տարածքը գտնվում է Լավարի անտառ-տնտեսության արևելյան մասում: Այստեղ առկա են բոխի, կաղնի, թխկի, սոճի, հացենի, հաճարենի, լորենի, դաժի, ընկուզենի, խնձորենի, տանձենի և այլ ծառատեսակներ, թփերից՝ հոնի, մասրենի, սզնի, գլեռենի, մոշենի և այլն» (էջ 20): Նշենք, որ ապագա լեռնահանքային ձեռնարկությանը հատկացված անտառները հարուստ են նաև բազմատեսակ դեղաբույսերով ու կենդանիներով, որոնք ենթակա են ոչնչացման (ավելի մանրամասն գրված է Հ.Ա.Սանասարյանի գրքում):

Թե ինչ վտանգներ են սպասվում Թեղուտի հանքավայրի տարածքի երկու՝ Թեղուտ և Շնող գյուղերի բնակչությանը այդ հանքավայրի շահագործման ընթացքում և դրանից հետո, շատ ճշմարտացի ու պատկերավոր գրված է Հ.Սանասարյանի գրքում:

Դժվար չի լինի պատկերացնել, թե ինչ չափերի կարող է հասնել շրջակայքի աղտոտվածությամբ ծանր և թունավոր մետաղներով, եթե սկսվեն Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման աշխատանքները: Եթե Թեղուտի հանքավայրից տարեկան արդյունահանվեն ու մշակվեն՝ 7,14 և 21 մլն տ հանքաքարեր, ինչպես նախատեսել են հանքավայրի շահագործման իրավունք ստացողները, կարող են ստացվել պղնձի խտանյութ՝ 85902 տ, 171804 տ և 257706 տ,

¹ Беллер Г.А. Экзамен разума. М.: Мысль, 1968, 252с.

մոլիբդենի խտանյութ՝ 1596 տ, 3192 տ և 4788 տ:

25 տարի հետո Թեղուտի հանքավայրից կարող է արդյունահանվել 385 մլն տ հանքաքար (հանքաքարերի կորուստներն այդ պարագայում կարող են կազմել 74 մլն տ): Արդյունահանվող և մշակվող 385 մլն տ հանքաքարերից խտանյութերի տեսքով պետք է կորզվի 4 մլն 812 հազ. 388տ, որը կկազմի արդյունահանվող հանքաքարերի (385 մլն տ) 1,25%-ը: Պոչամբարներ թափվող հանքաքարերի քանակը կկազմի 380 մլն 187 հազ. 612տ, կամ ամբողջի (385 մլն տ-ի) 98,75%-ը: Նշված քանակի պոչամբների մեջ կարող է պարունակվել 24 մլն տ պիրիտ հանքանյութ, իսկ վերջինիս մեջ էլ սելեն թունավոր տարրի քանակը կկազմի 480տ, տելուրինը՝ 336տ, երկաթինը՝ 11,172 մլն տ, ծծմբինը՝ 12,828 մլն տ:

Թեղուտի հանքաքարերից օգտակար տարրերի՝ պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով (նախագծի համաձայն պղնձի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ պետք է կազմի 86%, իսկ մոլիբդենինը՝ 70%) պոչամբարներ թափվող 380,188 մլն տ հանքաքարերում կարող են պարունակվել.



- պղինձ՝ 191438տ, կամ 552969տ խալկոպիրիտ հանքանյութ,
- մոլիբդեն՝ 24924տ, կամ 41612 մոլիբդենիտ հանքանյութ,
- սելեն (խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի հետ)՝ 193,39տ,
- տելուր (մոլիբդենիտ հանքանյութի հետ)՝ 2,09տ,
- ծծումբ (խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի հետ)՝ 209877տ,
- երկաթ (պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ)՝ 168268տ,
- ռենիում՝ 30,37տ, ոսկի՝ 560,9կգ:

Այսպիսով, պոչամբարներ թափվող օգտակար տարրերի ընդհանուր քանակները կկազմեն.

պղնձինը՝ 191438տ, մոլիբդենինը՝ 24924տ, սելենինը՝ 673,39տ, տելուրինը՝ 338,09տ, ծծմբինը՝ 13.037.877տ, երկաթինը՝ 11.340.268տ, ռենիումինը՝ 30,37տ, ոսկունը՝ 560,9կգ:

Պոչամբարներ կթափվեն նաև ոչ մեծ քանակության մկնդեղի արսենոպիրիտ (FeAsS), ծարիրի անտիմոնիտ (Sb_2S_3), կապարի գալենիտ (PbS), ցինկի սֆալերիտ (ZnS) հանքանյութեր, որոնք առկա են Թեղուտի հանքաքարերում, սակայն ուշադրության չեն արժանացել հետախույզ-երկրաբանների կողմից իրենց շատ փոքր պարունակության պատճառով: Մենք գտնում ենք, որ ամեն դեպքում դրանք ուշադրության պետք է արժանանային: Անհրաժեշտ էր թեկուզ մի քանի տասնյակ (20-30) մմուշներով որոշել դրանց պարունակությունները, քանի որ մկնդեղն իր արսենոպիրիտ, իսկ ծարիրն իր անտիմոնիտ հանքանյութերով իրենց մեջ մեծ վտանգներ են պարունակում:

Բանն այն է, որ դրանք թունավոր տարրեր են, հատկապես մկնդեղը և ծարիրը, որոնք պոչամբարներում կարող են առաջացնել խիստ թունավոր արսին (AsH_3) և ստիբին (SbH_3) գազեր ու թունավորել պոչամբարների տարածքը հարյուրավոր ու հազարավոր տարիներ (այնքան ժամանակ, որքան պահպանվում են պոչամբները տվյալ պոչամբարներում): Դրանց առաջացման «մեխանիզմը» մենք տեսնում ենք հետևյալ կերպ. պոչամբարներ թափվող պոչամբներում, ինչպես նշվել է, պարունակվելու են շատ մեծաքանակ պիրիտ (FeS_2) հանքանյութ, որը նույն պոչամբարներում առկա սուլֆիդային հանքանյութերից ամենից արագ և հեշտ է ենթարկվում օքսիդացման ու տարանջատման: Պիրիտի քայքայման հետևանքով առաջանում են ծծմբային գազեր՝ SO_2 և ապա SO_3 , վերջինս էլ միանալով մթնոլորտային տեղումների հետևանքով պոչամբներ թափանցող ջրի (H_2O) հետ առաջացնում է ծծմբական թթու (H_2SO_4): Ծծմբաթթուն ռեակցիայի մեջ մտնելով արսենոպիրիտ և անտիմոնիտ հանքանյութի հետ առաջացնում է արսին և ստիբին թունավոր գազերը՝



Ծծումբ տարրի և ծծմբային գազերի վտանգավոր ազդեցությունը շրջակայքում ապրող բնակչության վրա կարող է ունենալ աղետալի հետևանքներ: Այդ մասին՝ լրագրողներ Արփի Հարությունյանի և Մարիաննա Գրիգորյանի հոդվածների (www.armenianaw.com, 2006, №17, ապրիլ) հիման վրա պատկերավոր գրված է Հ.Սանասարյանի գրքում¹ (էջ 66). «... 1992թ., երբ Ալավերդու սև պղնձի մետալուրգիական գործարանը չէր աշխատում, չի արձանագրվել արատավոր ծննդի ոչ մի

¹ Հակոբ Սանասարյան, Աղետաբեր Թեղուտը, Հայաստանի կանաչների միություն, Երևան, 2008, 118 էջ:

դեպք, ապա 2001թ. Ալավերդում գրանցվել է բնածին շեղումով 28 դեպք, իսկ 2004թ. այդ թիվն աճել է մոտավորապես 5 անգամ՝ հասնելով 107-ի: Վերջին մեկ տարվա ընթացքում հայտնաբերվել է հիդրոցեֆալիա (երբ ուղեղի փոխարեն պտղի մոտ ջուր է՝ ուղեղի գերջրություն), անենցեֆալիա՝ գլխի դիմային մասը կա, իսկ ուղեղը չկա, ողնաշարի ճողվածք, «երկու գլխանի» պտուղ (գլխամեմբրային պարկ լցված ջրով) և այլ արատներ: Դրանք հիմնականում կյանքին անհամատեղելի արատներ են, և մինչև ծննդաբերությունը արհեստական վիժում է կատարվում (ասում է Ալավերդու ծննդատան գլխավոր բժիշկ Ամալյա Ազատյանը)»:

Արտասահմանյան գրականության (Вредные химические вещества, Ленинград, 1989, с. 170-256) հիման վրա պարոն Սանասարյանը տեղեկություններ է բերում ծծմբի և նրա միացությունների (ծծմբային գազերի) առաջացրած հիվանդությունների մասին՝ նյարդային, լյարդի, երիկամների, թոքերի, սրտանոթային, ատամների, աղեստամոքսային, շնչառական ուղիների հիվանդություններ, ընդհանուր թուլություն, գլխացավ, գլխապտույտ, հազ, լուսավախություն, գրգռվածություն, շնչահեղձություն, խռպոտություն և այլն:

Գնահատելով Թեղուտի պղծամոլիբդենային հանքավայրի պոչանքները, կոեսենք, որ հանքավայրի շահագործման ամբողջ 25 տարիների ժամանակահատվածում արդյունահանվող և մշակվող 385 մլն տ հանքաքարերից պոչամբարներ թափվող տարրերի արժեքը կազմելու է ավելի քան 15,18 մլրդ դոլար, այն պարագայում, երբ կորզվող պղինձ և մոլիբդեն տարրերից սպասվող հասույթը՝ մետալուրգիական գործարան ունենալու պարագայում, կարող է կազմել 12,3 մլրդ դոլար, իսկ խտանյութերի վաճառքի պարագայում՝ 6,765 մլրդ դոլար, այն էլ, եթե հանքավայրը շահագործվի նախագծով նախատեսված ցուցանիշներին համապատասխան (պղինձը կորզվի 85%-ով, իսկ մոլիբդենը՝ 70%-ով, որը Հայաստանի Հանրապետությունում պատահում է խիստ հազվադեպ): Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրերի փորձը ցույց է տալիս, որ Թեղուտի նույնանման հանքավայրի հանքաքարերի մշակման գործընթացում պղնձի կորզումը լավագույն դեպքում կարող է կազմել 70-71% (Քաջարանի հանքավայրի 2003թ. հետխորհրդային տարիների ամենալավագույն ցուցանիշը):

ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնիթերային հետազոտությունների կենտրոնի հետազոտություններով Քաջարան քաղաքի մթնոլորտում հայտնաբերվել են մի շարք ծանր մետաղներ, որոնք անցնում են բուսահողի և ջրի մեջ, իսկ այնտեղից էլ սննդանյութերի մեջ և, ի վերջո, մարդկանց օրգանիզմ:

Ծանր մետաղները խիստ վտանգավոր են նրանով, որ դրանք կայուն են և ունեն կուտակվելու հատկություն: Դրանք թունավոր և քաղցկեղածին են, առաջացնում են մուտացիաներ:

Բոլորին է հայտնի, որ Թեղուտի հանքավայրը պատկանում է Քաջարանի հանքավայրի տիպին, այսինքն՝ պղնձամոլիբդենային կազմավորման է և, համոզված ենք, որ պարունակում է նույն ծանր մետաղներն ու թունավոր տարրերը, որոնք հայտնաբերված են Քաջարանի հանքավայրում:

Սյունիքի մարզի Կապանի շրջանի քաղաքների (Կապան, Քաջարան) ու գյուղական համայնքների (Արծվանիկ, Գեղանուշ, Սյունիք, Լեռնաձոր և այլն) բնակիչների առողջական վիճակը խիստ վտանգված է պոչամբարներում կուտակված ծանր մետաղների և թունավոր տարրերի առկայության պատճառով: (Այդ մասին ստույգ տվյալներ կան ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնիթերային հետազոտությունների կենտրոնում, որի մի մասը բերված է Յու.Կուլեշովայի հոդվածում՝ «Горнодобывающие компании убивают все вокруг», «Деловой Экспресс» №12, апрель, 2011г.)

Նշված նույն վտանգները (ոչ պակաս և ոչ էլ շատ ավել) սպասվում են Թեղուտի հանքավայրի շահագործման ընթացքում և դրա շահագործումն ավարտվելուց հարյուրավոր ու հազարավոր տարիներ հետո Թեղուտի շրջակայքում տեղադրված գյուղերի և Ալավերդի քաղաքի բնակչության համար:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրն արդեն իսկ պատրաստվում է շահագործման՝ տարածքի անտառներն ամբողջությամբ արդեն իսկ հատվել են, չնայած տասնյակ հասարակական կազմակերպությունների բողոքին ու դժգոհությանը, կառուցվում են հանքավայրի շահագործման հետ առնչվող ենթակառուցվածքներ՝ ճանապարհներ, շենքեր ու շինություններ, հեռացվում են բացահանքի վերին հողային շերտը և այլն: Մի խոսքով արհամարհվում է ժողովուրդը, և հանքավայրը, ի վերջո, շահագործվելու է: Շահագործվելու է «պապենական եղանակներով»՝ օգտակար երկու տարրերի ցածր տոկոսներով կորզումով, ծանր մետաղների ու թունավոր տարրերի մեծաքանակ թափոններով,

հանքավայրի հարևանությամբ տեղադրված երկու՝ Թեղուտ և Շնող գյուղերի, ինչպես նաև պոչամբարից գիպտոմետրիկ ցածր հորիզոններում (Դեբետի կիրճում) տեղադրված մի քանի գյուղերի ոչնչացմամբ և այլն:

«Երկրի հրովարտակ» գրքույկի I գլխում գրված է՝ «Ընդունել, որ բնական պաշարներին տիրելու, կառավարելու և օգտագործելու իրավունքի հետ միասին առաջանում է շրջակա միջավայրին հասցվելիք վնասը կանխարգելելու և մարդկանց իրավունքները պաշտպանելու պարտավորություն»։ Իրականացվում է արդյոք այս պահանջը Թեղուտի հանքավայրի շահագործման պարագայում: Պատասխանը միանշանակ է՝ ոչ:

Նույն I գլխի 4-րդ կետում՝ «Ներկա և ապագա սերունդների համար պահպանել երկրի առատաբերությունն ու գեղեցկությունը» «բ» ենթակետում գրված է. «Ապագա սերունդներին փոխանցել երկրի մարդկային ու էկոլոգիական համակեցությունների ծաղկումը երկարաժամկետ հեռանկարով ապահովող արժեքներ, ավանդույթներ և սահմանակարգեր»: Ի՞նչ ենք մենք փոխանցելու մեր ապագա սերունդներին Թեղուտի հանքավայրի շահագործումից հետո.

- հնձված ու 2000հա տարածքում ոչնչացված անտառներ,
- 240հա տարածքի թեք լեռնալանջով ձգված ջրափոս,
- 200-300հա տարածքի վրա ծանր մետաղներով ու թունավոր տարրերով լեցուն պոչամբարներ,
- Լոռու մարզի մի քանի (4-5) բնակավայրերի ամայացում,
- լեռնային փոքրիկ գետակների զուլալ ջրերի աղտոտում ու թունավորում,
- պոչամբարների շրջակայքում օդային ավազանի թունավորում արսին (AsH_3) և ստիբին (SbH_3) գազերով,
- անտառներում ապրող կենդանական ու բուսական աշխարհի ոչնչացում:

Մեր կողմից նշված 5, 6 և 7-րդ կետերին համահունչ «Երկրի հրովարտակ» գրքույկի II գլխի 5-րդ կետի «բ» ենթակետում գրված է՝ «Երկրի կենսապահովման համակարգերի պաշտպանության, կենսաբազմազանության օժանդակելու և բնության ժառանգության պահպանման համար ստեղծել ու պաշտպանել կենսունակ բնական և կենսոլորտային արգելոցներ, ներառյալ անարատ հողերը և ջրային տարածքները»: Մենք այս պահանջները կատարում ենք հակառակ իմաստով՝ ի վնաս բնությանը:

Հոդվածի այս բաժինը՝ կապված Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետ, ցանկանում ենք ավարտել ՀՀ բնապահպանության պետական տեսչության պետ՝ Ա.Ավագյանի կարծիքով (023/Ե.1402,11.09.2006թ.)՝ ուղղված ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն պարոն Ա.Սանթրոսյանին, որում գրված է. «Ըստ աշխատանքային նախագծի՝ տարածքը հիմնականում անտառածածկ է: Հատման ենթակա է 127700 ծառ: Բացի այդ, նշված տարածքը հարուստ է օգտակար բուսականությամբ, առաջին հերթին, եզակի դեղաբույսերով: Նշված տարածքի կենդանական աշխարհը հարուստ է իր բազմազանությամբ... Նշված անտառի վերացումը անդառնալի է... Գտնում ենք, որ «Արմենիան քափրը փրոգրամ» ՓԲԸ-ն՝ Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացրած աշխատանքային նախագիծը բացասական ազդեցություն կունենա բուսական և կենդանական աշխարհի վրա, որն իր հերթին բացասաբար կանդադարառնա շրջակա միջավայրի և տվյալ տարածքի էկոլոգիական հավասարակշռության վրա: Ելնելով վերը նշվածից՝ Բնապահպանական պետական տեսչությունը, «Արմենիան քափրը փրոգրամ» ՓԲԸ-ն Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքային նախագծի վերաբերյալ տալիս է բացասական կարծիք»:

Հ.Սանասարյանն էլ իր հերթին գրքի «Ամփոփում» բաժնում գրում է. «Թեղուտի հանքավայրի շահագործումը կործանարար կլինի ողջ տարածաշրջանի համար: Այն կաղքատացնի մեր հանրապետության կենսաբազմազանությունը, կոչնչացնի անկրկնելի մի բնական համակարգ՝ իր սարերով, կիրճերով, բուսականությամբ, ջրագոյացման ու ջրաբաշխման բնական օբյեկտներով, պատմամշակութային հուշարձաններով, և անգամ շրջակա տարածքներում անհնար կդարձնի գյուղատնտեսական անվտանգ մթերքի արտադրությունն ու մարդու նորմալ կյանքը»:

«Նախագծի իրականացումը բխում է սահմանափակ թվով մարդկանց, գլխավորապես

օտարերկրյա ընկերությունների շահերից և հակասում է մեր ազգի ու պետականության շահերին»:

Լոռու մարզում արդեն իսկ հետախուզված և արդյունաբերական գնահատական ստացած հանքավայրերի հետ մեկտեղ այժմյան դրությամբ առկա են մի քանի հեռանկարային հանքա-երևակումներ, որոնցից առավել հեռանկարայիններն են Հանքաձորի պղինձ-հրաքարային, Մար-ցիգետի, Տանձուտի և Մարգահովտի ոսկի-սուլֆիդային, Պրիվոլնիի կապար-ցիկային և Բագումի երկաթաքարային հանքավայր-հանքաերևակումները:

Մենք գտնում ենք, որ Լոռու մարզի դեռևս չհետախուզված, բայց հանքավայր անվանված հանքաերևակումները հետախուզելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրանց տեղանքը, հանքա-մարմինների ձևերը, չափերը, անկումները և շահագործման եղանակները:

Անտառապատ տարածքներում անհրաժեշտ է հետախուզել միայն և միայն երակային տիպի (ոչ հզոր) մարմիններով ներկայացված հանքավայր-հանքաերևակումները, որոնք հետագայում կարող են շահագործվել բացառապես ստորգետնյա փորվածքների օգնությամբ, որոնք էլ հետագայում (շահագործական աշխատանքներին զուգընթաց և դրանց ավարտից հետո) հնարավոր կլինի լցնել շրջապատի դատարկ ապարներով և վերականգնել միջավայրի անաղարտ դիրքն ու դրվածքը՝ առանց էական վնաս հասցնելու անտառներին: Մենք գտնում ենք, որ անտառապատ տարածքներում ոչ մի դեպքում չի կարելի թույլատրել բաց հանքերի եղանակով շահագործական աշխատանքներ կատարել: Չի կարելի նույնիսկ թույլատրել այն հանքավայրերի հետախուզումը, որոնք տեղադրված են անտառներում և վաղօրոք հայտնի է, որ դրանք հետագայում պետք է շահագործվեն բաց հանքերի եղանակով:

Երկիր մոլորակը համատարած տաքանում է: Այսպիսի տաքացմանն այժմ անվանում են «Երկրի գլոբալ տաքացում»: Բացառություն չի կազմելու նաև «Հայաստան աշխարհը», որը շատ ու շատ այլ տարածքների համեմատ տաքանալու է ավելի «ուժգին»: Մեր անտառները մեր իսկ սեփական ձեռքերով, օրինական և ապօրինի կտրվելով, ոչնչացվում են, իսկ դա նշանակում է, որ մեր «երկիրը» անապատացվում է: Իսկ թե ինչ է կատարվում անապատներում՝ բոլորին է հայտնի: Մենք, Հայաստանի բնակիչներս, պատասխարվելու տեղ չենք ունենալու, ենթարկվելու ենք արևահարության բառիս բուն իմաստով (Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթները «հարվածելու են» մեր «մերկ» գլխին): Հանրապետության ջրերը խիստ նվազելու են՝ տեղումների քանակը պակասելու է, իսկ գոլորշիացումը ավելանալու, փոշու, վնասակար մանրէների և վտանգավոր շատ նյութերի քանակներն ավելանալու են, օդի մեջ կենդանական աշխարհի համար խիստ կենսական թթվածնի քանակը նվազելու է: Այս բոլորն, ի վերջո, կարող է բերել կենդանական աշխարհի, այդ թվում նաև մարդկանց ոչնչացման կամ տեղահանության (այս տարածքից փախուստը հավասարագոր է ոչնչացման):

Թեղուտի հանքավայրի շահագործումը և մեր վերաբերմունքը դեպի բնաշխարհը, ի վերջո, բերելու է շատ մեծ աղետների:

Ահա այն բոլորը, ինչ ցանկանում էինք ասել Թեղուտի աղետի հետ կապված:

ԹԵՂՈՒՏԻ ՊՐԵՇԱՄՈՒԻԲԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՊԼԱՍՎՈՂ
ՀԱՆՔԱՀԱՐՍՏԱՅՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԱՎԱԳՅԱՆ ՀՐԱԶԻԿ, երկր. հանք. գիտ. դոկտոր

ՀՀ ԳԱԱ Մ. Զոհանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր

Հանքաքարերի հանքահարստացման գործընթացներում օգտակար պղինձ և մոլիբդեն տարրերի թերկորզման և պիրիտ հանքանյութի բոլորովին չկորզման հետևանքով բնական միջավայր՝ պոչամբարներ կթափվեն պղինձ՝ 326040 տ, մոլիբդեն՝ 19823 տ, պիրիտ՝ 25,78 մլն տ, սելեն՝ 673 տ, տելլուր՝ 338 տ, որոնք էլ այլ չգնահատված մետաղների՝ կապարի, ցինկի, մկնդեղի, բիսմութի հետ միասին կստեղծեն էկոլոգիական աղետի հզոր օջախներ:

Հոդվածում քննարկվում են Թեղուտի պղնձամոլիբդենային ոչ լիարժեք հետախուզված և հետազոտված հանքավայրի շահագործման հետ կապված բնական միջավայրին հասցվելիք վնասների, շրջակա բնակավայրերի բնակչությանը սպասվող վտանգների հիմնախնդիրները:

Բանալի բառեր. հանքաքար, պղինձ, մոլիբդեն, ռենիում, ռեսուրս, պաշար, ֆիտոնցիդներ:

ОЦЕНКА ОЖИДАЕМЫХ ХВОСТОВ ОБОГАЩЕНИЯ И ИХ ЭКОЛОГИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ В РЕЗУЛЬТАТЕ РАЗРАБОТКИ
ТЕХУТСКОГО МЕДНО-МОЛИБДЕНОВОГО МЕСТОРОЖДЕНИЯ

ГРАЧИК АВАКЯН, доктор геолого-минералогических наук

главный научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА,

Аннотация

В процессе обогащения руды в результате недоизвлечения меди и молибдена, а также недоизвлечения вообще минерала пирита в окружающую среду (хвостохранилища) будет выброшено 326040 т меди, 19823 т молибдена, 25,78 млн. т пирита, 673 т селена, 338 т теллура, которые совместно с другими не оцененными металлами (свинцом, цинком, мышьяком, висмутом) создадут очаги экологической катастрофы.

В статье обсуждаются вопросы вредного воздействия хвостов обогащения на природную среду и жителей окружающих населенных пунктов в результате разработки неполноценно разведанного и слабо изученного Техутского медно-молибденового месторождения.

Ключевые слова: руда, медь, молибден, рений, ресурсы, запасы, фитонциды.

THE EXPECTED ESTIMATES OF THE ENRICHED WASTES AND ASSESSMENT OF THE ENVIRONMENTAL DAMAGE
CAUSED BY THEM WHEN TEGHUT COPPER MOLYBDENUM ORE MINE IS EXPLOITED

HRACHIK AVAGYAN, Doctor of Sciences (Geology and Mining)

Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

In the process of ore enrichment due to partial extraction of the useful copper and molybdenum elements and not extracting of pyrite ore 326040 tons of copper, 19823 tons of molybdenum, 25.78 million tons of pyrite, 673 tons of selenium, 338 tons of tellurium will be thrown into the tailing, that along with other elements, lead, zinc, arsenic, the price of which is not quoted will cause serious sources of environmental disaster.

The article discusses the issues related with environmental damage, and threat to the residents of the area caused by expected exploitation of not thoroughly explored Teghut copper and molybdenum ore mine.

Keywords: ore, copper, molybdenum, rhenium, resources, stock, phytoncide.